ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

2018Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2018 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կողմից շարունակվել է թանգարանային գործունեության իրականացումը:

Թանգարանի դիմացի ճեմասրահում տեղադրված ցուցափեղկում ցուցադրվել են ՀՀ ոստիկանության վետերանների խորհրդի ստեղծման, գործունեության վերաբերյալ փաստաթղթեր, նկարներ: Իսկ այնուհետև լուսաբանվել է ՀՍՍՀ ՆԳՄ մարտական և աշխատանքային փառքի թանգարանի ստեղծմանն առնչվող փաստաթղթեր, լուսանկարներ և այլն:

Ս/թ. հունվարի 17-ին «news.am» համակարգչային կայքում թղթակից Մարիամ Լևինան հրապարակել է «Հին լուսանկարներ, համազգեստներ, զենք. Հայաստանի Ոստիկանության թանգարանը այցելուների է սպասում» հոդվածը, որում մանրամասնորեն լուսաբանվել է թանգարանի 40-ամյա պատմությունը: Ընդորում հոդվածը հրապարակվել է և հայերեն, և ռուսերեն լեզուներով:

Փետրվարի 5-ին Երևանի միլիցիայի դպրոցի առաջին պետ Հրաչիկ Պետրոսյանի ծննդյան 90-ամյակի միջոցառումների շրջանակում թանգարան այցելեցին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Վարդան Եղիազարյանը և դպրոցի առաջին շրջանավարտները:

Թանգարան են այցելել Մանուկ Աբեղյանի անվան թիվ 3 ավագ դպրոցի աշակերտները, ուսուցիչները և ոստիկանության վետերանները՝ դպրոցին կցված տեսուչների հետ, Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցի աշակերտները, ուսուցիչները և ոստիկանության վետերանները, Հակոբ Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիրի սաները, ուսուցիչները և կենտրոնի վարչական շրջանի ոստիկանության վետերանները, Նագարշյան մանուկների տան սաները ղեկավարության հետ, Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները ուսուցիչների հետ, Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցի 10, 11 և 12-րդ դասարանների աշակերտները, ուսուցիչները և ոստիկանության ծառայողներ,

Հայաստանի օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնի սաները, Երևանի թիվ 175 միջնակարգ դպրոցի աշակերտները:

Թանգարանում հեռակա ուսուցման 2-րդ կուրսի 3-րդ դասակի սովորողների, քոլեջի 1-ին կուրսի 1 և 2-րդ դասակների սովորողների հետ դաս է անցկացրել պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Սահակյանը:

Թանգարան են հաճախել նաև Արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչներ, Օմսկի ներքին գործերի վարչության պատմության թանգարանի վարիչ Ռուդենկոն, Եվրոպայի ոստիկանների քոլեջների ասոցիացիայի անդամներ, ոստիկանության Երևանի վետերանների խորհուրդների նախագահներ վետերանների հետ:

Այցելությունների ընթացքում ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դ.Հովսեփյանը մանրամասն բացատրել է և թանգարանի ստեղծման, և թանգարանում տեղադրված առարկաների, փաստաթղթերի և այլնի պատմությունը:

Թանգարանում այցելությունների մասին պարբերաբար լուսաբանվել է ՀՀ ոստիկանության և Կրթահամալիրի համակարգչային կայքերում:

Հաշվետու տարում թանգարանի կողմից օգտագործվել են նաև կրթահամալիրի ռադիոցանցի և պաշտոնաթերթի հնարավորությունները: Ռադիոցանցով հրապարակվել են նյութեր թանգարանի գործունեության 41 տարվա և Սպիտակի երկրաշարժի ժամանակ ոստիկանության կատարած աշխատանքների մասին, իսկ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթի 2018թ. դեկտեմբերի 25-ի թիվ 8 համարում հրապարակվել է «Ապրել արարելու առաքելությամբ» հոդվածը:

Աշխատանքներ են տարվել նաև թանգարանային ֆոնդերի պահպանման պայմանների բարելավման ուղղությամբ:

Թանգարանի աշխատանքները վերսկսելուց հետո 2015 թվականի մայիսից թանգարան են հաճախել շուրջ 2000 հյուրեր, դպրոցականներ, Կրթահամալիրի սովորողներ և քաղաքացիներ: